



**ԳՈՐԾՆԵԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՈՒՆ ԲԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ**

28-ը փետրվարի, 2011 թ.

Համառոտագիր

Վերջ դրեք կրոնական փոքրամասնությունների նկատմամբ անհանդուրժողություն սնուցող քաղաքականությանը

Կրոնը կամ արտահայտվելու ընդունելի և իրավաչափ ձևերը բնորոշելը և սահմանազատելը նույնքան դժվար է, որքան կրոնական ազատությունները հարգելու պատրաստակամությունը քաղաքական մակարդակով պարբերաբար վերահաստատելը: Հայաստանի կառավարությունը 2010 թվականին վերահաստատել է կրոնական հանդուրժողություն դրսևորելու խորհրդանշական պատրաստակամությունը և զգուշավոր դիրքորոշում է որդեգրել «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքում առաջարկվող փոփոխությունների հարցում: Բանավեճի առարկան այն չէ, թե արդյոք այդ «խելացի ռազմավարությունը» վկայում է կրոնական ազատությունները խթանելու թե քննադատությունից իշխանություններին բարեհաջող կերպով ապահովագրելու մասին: Ցանկացած պարագայում, հասարակայնորեն կերտված այնպիսի դասակարգումների նկատմամբ հանդուրժողություն հռչակելը, ինչպիսիք են ռասան, ազգությունը, էթնիկ ծագումը և կրոնը, ըստ էության համարվում է սովորական երևույթ, որն աշխարհի պետությունների մեծ մասում ժամանակակից քաղաքական ինքնության անքակտելի մաս է: Չնայած որ կրոնական ազատության իրավունքն ըստ էության այնպիսի ազատ ժողովրդավարական հասարակության հիմնարար իրավունքներից է, ինչպիսին հավակնում է դառնալ Հայաստանը, ներկայիս քաղաքական համակարգում առկա են անհանդուրժողության ակնհայտ վտանգներ: Այս ամենի ֆոնին, «Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնությունը, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը («ԵԱՀԿ»), Եվրոպայի խորհուրդը և Միավորված ազգերի կազմակերպության հանրային տեղեկատվության վարչությունը (ՄԱԿՀՏՎ) կազմակերպել էին մասնագիտական քննարկում, որին մասնակեցին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը, Երևանում ԵԱՀԿ-ի գրասենյակի ղեկավար, դեսպան Մերգեյ Կապինոսը, Հայաստանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավար Սիլվիա Ջեհեն և ՄԱԿՀՏՎ-ի ներկայացուցիչ Արմինե Հալաջյանը: Մասնակիցների թվում էին այնպիսի առաջատար փորձագետներ, ինչպիսիք են «Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոն» ՀԿ-ի նախագահ Ստեփան Դանիելյանը, Վենետիկյան հանձնաժողովի անդամ Ֆինոլա Ֆլենեգանը, «Հայաստանի հելսինկյան կոմիտե» ՀԿ-ի նախագահ Ավետիք Իշխանյանը, Կրոնի կամ դավանանքի ազատության ԵԱՀԿ-ի փորձագիտական խմբի անդամ Ջոն Քինեհենը, Հայաստանի

ամբողջաավետարանական եկեղեցիների համագործակցության քարտուղար Ս. Նավոյանը, Երևանի ավետարանական եկեղեցու հովիվ Լ. Պարտազճյանը: Հանդիպման ընթացքում քննարկված թեմաներից էին «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքում առաջարկվող փոփոխությունները, կրոնի նկատմամբ աշխարհիկ պետության վերաբերմունքը, տարբեր հավատների և պետության միջև հարաբերությունները և լրատվամիջոցների դերը կրոնական անհանդուրժողության սնուցման գործում:

2010 թվականին խորհրդարանում է հայտնվել «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի վիճահարույց նախագիծ, և տեղական իրավապաշտպան կազմակերպությունները և փոքրամասնական կրոնական համայնքները մտահոգված են նախագծի գրանցման և հոգեորսության մասին դրույթներով: Չնայած որ օրենքի 2009 թվականի նախագծի վերաբերյալ բազմաթիվ քննադատական դիտողություններ էին ստացվել Վենետիկյան հանձնաժողովից և կրոնի հարցերով տեղական փորձագետներից, իշխանությունները նրանց առաջարկությունները և խորհուրդները հաշվի չէին առել: Օրենքի վերջին փոփոխությունները նպատակ են հետապնդում օրենքով որպես քրիստոնեական կրոնական կազմակերպություն գրանցելու պահանջ սահմանել «քրիստոնեական հավատը»՝ որպես հավատ «Հիսուս Քրիստոսի՝ որպես Աստծու և Փրկչի» նկատմամբ, և «Սուրբ Երրորդությունն» ընդունելը: Վերոհիշյալ սահմանումն ակնհայտորեն խնդրահարույց է թվում, մասնավորապես այն պատճառով, որ հակասում է ՀՀ Սահմանադրության՝ աշխարհիկության վերաբերյալ դրույթներին: Փորձագետները շարունակաբար կրկնել են, որ դա անհամաչափ միջամտություն է խղճի և հավատի ազատության, ինչպես նաև՝ կրոնական ինքնուրույնության նկատմամբ: Բացի այդ, օրենքի նախագծով փորձ է արվում ամրապնդել «հոգեորսության» սահմանումը և քրեականացնել այն, ընդ որում՝ «հոգեորսություն» բառը ոչ իրավաբանական եզրույթ է, որը բացասաբար օգտագործվում է որպես «ցանկացած տեսակի հոգեորսության» հումանիշ: Այս ձևակերպումը կարող է ուղի հարթել ցանկացած կրոնական կազմակերպության գործունեություն դադարեցնելու համար: Կրոնի մասին օրենքի նախագիծը լայնորեն քննադատվել է թե Հայաստանում, տեղական փորձագետների և կրոնի ազատության ակտիվիստների կողմից, թե միջազգայնորեն՝ Վենետիկյան հանձնաժողովի կողմից: Օրենքի նախագծի առնչությամբ ծագող լրջագույն մարտահրավերներից արժե հիշատակել այն փաստը, որ տեքստի հայերեն բնօրինակը մինչ օրս ծանոթացման նպատակով հասանելի չէ հանրությանը: Այնուամենայնիվ, կարևոր է այն հանգամանքը, որ արդարադատության նախարարը հրապարակավ ընդունեց փոփոխությունների գործընթացն ավելի թափանցիկ դարձնելու և քվեարկությունից ողջամիտ ժամանակ առաջ փոփոխությունները հանրությանը հասանելի դարձնելու օրինական անհրաժեշտությունը:

Քննարկման մասնակիցների ուշադրությունը հրավիրվեց նաև կրոնական փոքրամասնությունների նկատմամբ անհանդուրժողության միտումների առաջացմանը: Վերջին տարվա ընթացքում հայ հասարակության հանդուրժողության ցուցանիշները շարունակել են վատթարանալ: Մտահոգության արժանի հրատապ խնդիր է անհանդուրժողության արարքների նկատմամբ իշխանությունների վտանգավոր անտարբերությունը և անհանդուրժողության և խտրականության մթնոլորտը շիկացնելու

համար պատասխանատու անձանց պատժելու դժկամությունը: 2009 թվականի հունիսին Ազգային անվտանգության ծառայության Գյումրու բաժինը շարունակաբար անհանգստացրել է «Christian Cultural Ministries International» բարեգործական ՀԿ-ի անդամներին, սակայն իրավապահ մարմինները հրաժարվել են այդ առնչությամբ գործ հարուցել: Քննարկման մասնակիցներն անդրադարձան նաև ոչ ավանդական հավատների հետևորդների դեմ ուղղված տագնապահարույց այլ դեպքերին: 2010 թվականին «Մեկ ազգ կուսակցություն» անվանումը կրող խումբը շարունակել է Երևան քաղաքում փակցնել Եհովայի վկաներին դատապարտող և «աղանդների» դեմ «իրազեկության մակարդակը բարձրացնող» թերթիկներ: Նմանապես, զանգվածային լրատվամիջոցներում կրոնական փոքրամասնությունները պիտակավորվել են որպես «աղանդներ», և ծրագրերը շարունակաբար նսեմացրել են տարբեր կրոնները՝ բացառությամբ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու: Բացի այդ, պետական դպրոցներում կրոնական ազատության հիմնախնդիրը լուրջ բանավեճի առարկա է դարձել: 2003 թվականից դպրոցներում դասավանդվում է «Հայ եկեղեցու պատմություն» առարկան, և կրոնական փոքրամասնությունների խմբերի անդամների երեխաները դարձել են թիրախներ և մեկուսացվել մյուսներից: Փորձագետները քննարկեցին արձանագրված այն դեպքերը, որոնցում ուսուցիչները ճնշումների էին ենթարկել աշակերտներին՝ սպառնալով պատժել «աղանդների» կազմակերպած միջոցառումների մասնակիցներին:

Հաշվի առնելով այն փաստը, որ Հայաստանն էթնիկ և կրոնական առումով հիմնականում միակազմ երկիր է, առանձնակի ուշադրություն է պահանջվում՝ բացառելու կրոնական փոքրամասնությունների մարզինալացումը: Ուսումնասիրելով ոչ առաքելական կրոնական հավատների հետևորդների առջև ներկայումս ծառայող տարաբնույթ մարտահրավերները՝ քննարկման մասնակիցները կարևորեցին պրագմատիկ քաղաքականության և օրենսդրական մի շարք գործողություններ:

Առաջարկություններ

- «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի նախագծի տեքստի հայերեն բնօրինակը տրամադրել քաղաքացիական հասարակությանը՝ վերջինիս վերլուծությունը և առաջարկները ստանալու նպատակով
- Փոփոխել «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի նախագծի դրույթները՝ ապահովելու խղճի ազատությունը պաշտպանելու և խթանելու՝ մարդու իրավունքների ոլորտում Հայաստանի ստանձնած միջազգային իրավական պարտավորությունների կատարումը, և հնարավոր դարձնելու քաղաքացիական հասարակության և Հայաստանի միջազգային գործընկերների, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի և ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի արտահայտած մտահոգությունների լիարժեք արտացոլումը
- Ամբողջովին վերանայել «քրիստոնեական հավատ» և «հոգեորսություն» հասկացությունների ձևակերպման մոտեցումը
- Համարժեքորեն արձագանքել կրոնական խտրականության և բռնության դեպքերին
- Քաղաքացիներին թույլ տալ՝ դավանելու իրենց կրոնը հանդուրժողության միջավայրում